Յուրաքանչյուր ազգ վերապրում է փլուզման իր շրջանը, երբ թվում է, թե ամեն ինչ անդառնալիորեն կորած է: Շատերը հակված են մեղավորներ փնտրելուն, ավելի խելամիտները մատնանշում են օբյեկտիվ պատճառները: Միայն անհատներն են, որ ընդունակ են բարձրանալով հասնել ներքին շարժիչ ուժերի գիտակցմանը և գործել ապագան կերտելու ուղղությամբ:

Էռնստ Յունգերն ապրել է մեկ դար և երկու տարի՝ հետ չնայելով ոչ հեղինակություններին, ոչ շրջապատին, ոչ էլ ժամանակներին ու հանգամանքներին: Ռազմիկ, փիլիսոփա, գրող և գիտնական: Մի խոսքով Մարդ առասպել:



ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Էռնստ Յունգեր Die Standarte. 1925. 18 Oktober.

Ամեն ոք, ով չի փորձում նախ տեսնել ուժը, որից հետո դրա հատուկ դրսևորումը, շուտով խճճվելու է անթիվ հակասությունների մեջ, որոնք գերիշխում են մեր ակնթարթային հարցադրումներում: Հատկապես, ազգի մարդը, անձնական զգացմունքներն ու տեսակետները հաղթահարելով, ձգտում է գտնել իրական իմաստը, քանի որ նա ցանկանում է ամբողջը, այլ ոչ թե մասը: Միայն հարցի ձևակերպումը բավարար չափով ընդլայնելով կարելի է հուսալ, որ կհասնես

համընդհանուր կապի ընկալմանը, այլապես կմնաս մասնակի ճշմարտությունների ու կուսակցական իմաստությունների շրջանակում:

Բայց որքան մոտենում ես պատմական ժամանակի մի պահի, այնքան ավելի դժվար է լինում գտնել անհրաժեշտ հեռավորությունը և պահպանել անաչառությունը: Դա տեղի է ունենում, երբ մենք դիտարկում ենք հեղափոխությունը կամ մի երևույթ, որը մենք այդպես ենք կոչում: Տարածված պատկեր է «թիկունքից հասցված դաշույնի հարվածը», որի զոհը դարձել է գործող բանակը: Այս կերպարը, Վիլհելմ Մարքսի խոսքերով[1], բացառապես թատերական է: Նա ելնում է այն մտածելակերպից, որ պատմությունը կերտում են անհատները, այլ ոչ թե բարձրագույն ուժը, այնպես որ չափից մեծ պատիվ է այն վերագրել եզակիին: Նմանապես, հեղափոխականը հավատարիմ է այն համոզմունքին, որ հենց նա է վերջ դրել պատերազմին՝ այն համարելով հանցագործություն: Բայց եթե դժվար է պատերազմ «անել», նույնքան անհնար է այն ավարտել: Պատերազմն ավարտվում է այն պահին, երբ ճակատագիրը հրաժարվում է այս ձևով ի հայտ բերել իր մեծ ուժային հոսքերը՝ ոչ ուշ, ոչ շուտ, և ինչպես պատերազմի գագաթնակետին մարդը հանդիսանում է միայն բարձրագույն կամքի արտահայտություններից մեկը, այնպիսին էլ նա մնում է նաև դրա ավարտին:

«Թատերական ըմբռնումը» հանգեցնում է անլուծելի հակասությունների: Եկեք ուշադրություն դարձնենք ռազմանավի անձնակազմին: Պատերազմի սկզբում մենք տեսնում ենք ընտրված թիմ՝ սպառազինված հզոր միջոցներով, խիզախ, ուժեղ, վարժեցված, պատերազմով ոգեշնչված, կայսերական կամքով կենդանացած, որի համար ավելի լավ զենք չէր կարելի ցանկանալ: Վրա է հասնում ուժերի մեծ փորձությունը, և այդ մարդիկ՝ ծովակալից մինչև վերջին հնոցապան, ցույց են տալիս, որ ունակ են նպատակին հասնելու: Եվ հենց այստեղ՝ ծովում, որտեղ տեխնիկան դրսևորվում է իր վերջին, ամենաբարդ ձևերով, որն անհնարին է կուտակել ցամաքում, երբ նրանք կռվում են համախմբված, այլ ոչ թե պայթյուններից առաջացած ձագարափոսերում ցրված, լինում են պահեր, երբ պատերազմի գաղափարը հայտնվում է իր հոյակապ ռոմանտիկ մաքրության և ազնվականության կերպարով: Սխրանքները կատարվում են այն ժամանակ, երբ կարծես, ոչ թե մարդն է գործում, այլ բյուրեղյա հստակ գաղափարը: Այն սխրանքները, որոնք հավասար են անցյալի ցանկացած մեծ դարաշրջանի նվաճումներին, որոնք պատմությունը գրանցում է որպես ամուր նվաճում ապագայի համար, որը դեռ կարող է գնահատել քաջությունն ու խիզախությունը: Մենք երբեք չենք դադարի հպարտանալ այն փաստով, որ մեզ մոտ ոչ թե փառաբանված բացառությունն էր, այլ օրինաչափությունն էր, երբ խորտակվող նավի անձնակազմը զոհվում էր « կեցցե՛» գոչելով և ծածանվող դրոշով, և երբ յուրաքանչյուրն արդեն նայում էր ուղիղ մահվան մթագնած աչքերի խոռոչներին: Մենք երբեք չենք կարող կարդալ առանց վեհ

[1] *Wilhelm Marx,* (1863-1946)՝ «Աշխարհամարտը բնագիտական պատմական ընկալման և ռասայական հարցի վերաբերյալ կաղրային սպայի սիրողական մտքի լույսի ներքո» գրքի հեղինակ: Գիրքը, լույս է տեսել 1919 թվականին, որը Էռնստ Յունգերն անվանել է սրամիտ:

զգացողության այն ճակատամարտի մասին, երբ սառցե ջրում մնացած անձնակազմը ոգևորված երգեր էր երգում, և երբ արկերից ստացված ծակվածքներով նավերը պատրաստվում էին արժանապատվությամբ ընդունել տորպեդային հարվածը: Այս ամենը ազդում է մեզ վրա, ինչպես իրական լեգենդը:

Վերջերս լույս տեսավ Հյուսիսային ծովում պատերազմի մասին ռազմածովային ուժերի գլխավոր շտաբի աշխատությունը, որը գրված էր ծովային սպաներին բնորոշ սթափ գործնական ոճով, բայց հենց այն ոճով, որը ժամանակակից մարդու հերոսական կողմն ի հայտ էր բերում առանձնահատուկ հստակությամբ: Սակայն այս համարձակ մարդկանց և նրանց սխրանքների մասին ընթերցողը կհարցնի, իսկ որտե՞ղ էին այդ հերոսական անձինք 1918 թվականին, երբ ամեն ինչ փլուզվեց: Հնարավո՞ր էր պատկերացնել կամ մտածել, որ այդ մարդիկ նույն այդ նավերի կայմերին կարող էին բարձրացնել հեղափոխության կարմիր դրոշը: Եվ իրականում որտե՞ղ էին այդ մարդկանց սրտերը: Այնտե՞ղ, որտեղ անգլիական հածանավերի էսկադրան ջախջախվում էր նրանց արկերի ուժգին հարվածներից, թե՞ այնտեղ, որտեղ հռչակվում էր՝ խաղաղություն, ազատություն, հաց: Այլ կերպ ասած, ինչպես կարող էին այդ խիզախ մարդիկ այդ աստիճանի սրիկաներ լինել:

Եվ այստեղ սկսվում են այն դատողությունները, որոնք մեզ ծանոթ են անվերջ թեժ բանավեճերից, երբ անհասկանալին փորձում են բացատրել արտաքին պատճառներով: Հանդես են գալիս մեզանում ընդունված ձևերով գիտական մոտեցման դեմ՝ հղում անելով ներսից և դրսից քայքայիչ քարոզչությանը: Քննարկվում է նյութական մատակարարումն իր նախադրյալներով, ձվի սպիտակուցի և ածխաջրերի էներգիան կապվում է կենսունակության հետ: Ասում են, թե ինչու է ավելի երկար դիմացել գործող բանակը, արդյո՞ք սպաները շատ ծեր կամ առավել երիտասարդ են եղել, և ամենուր, տրամաբանողի տեսակետին համապատասխան, հիվանդ տեղեր են որոնվում:

Իհարկե, այս հարցերը չափազանց կարևոր են: Դրանք արդեն անգիտակցաբար արտահայտում են գալիք որոշումից առաջ լավագույն, ջանասեր ձևերով հանդես գալու կամքը: Բայց դրանք շոշափում են հենց ձևերը, այլ ոչ թե էությունը:

Նա, ով ցանկանում է տեսնել էականը, պետք է պատմականորեն մտածի, այսինքն՝ բոլոր իրադաձություններում գտնի իսկապես անհրաժեշտ տարրը: Պատմությունը սխալներ չի ճանաչում. նա միայն գիտի տեղի ունեցածը, և դա լավ է: Երբ 1918 թվականի հեղափոխականի մտածողության մեջ բացահայտվում է սխալը, որտեղ պատերազմն ընկալվում է ոչ թե որպես ճակատագրական նշանակության իրադարձություն, այլ որպես խելագարության տեսակ, որը հեշտությամբ կարելի է կանխել ինտելեկտուալ կամ բարոյական հայացքներով, այդ սխալը չպետք է կրկնել հեղափոխության նկատմամբ նույն դրվածքով: Այո, ժամանակն է միանգամայն հստակ ասելու, չնայած հավանական թյուր ըմբռմանը՝ հեղափոխության անհրաժեշտությունը նույնպես կար: Դա *այս* պատերազմի անհրաժեշտ ամփոփում

էր, բայց ոչ ընդհանրապես պատերազմի ամփոփումը: Արդյո՞ք դա արժանի երևույթ էր, որը համարժեք էր բուն պատերազմի բարձրագույն նվաճումներին, այլ հարց է, որը վերաբերում է անձնական մեկնաբանությունների ոլորտին: Նախ, սակայն, պետք է հստակեցվի էականը:

Անհերքելի փաստ է, որ պատերազմում լավ կռված մարդիկ հետագայում էլ լավ են ծառայել հեղափոխությանը, և դա չի կարող չզարմացնել: Այստեղ բավարար չեն միայն անձնական հարցադրումները, այստեղ պետք է ջանքեր գործադրել գաղափարը հասկանալու համար: Քանի որ ծածանվող դրոշի ներքո մահվան գնալու ոնակ մարդկանցից կարելի էր ակնկալել, որ նույնիսկ ամենանվազ պարենային մատակարարման դեպքում նրանք կկարողանան դիմանալ ևս մեկ տարի: Դժվար է ենթադրել բարոյական հիմքերի հանկարծակի փոփոխությանը, որն այնքան կտրուկ արտահայտվեց այն փաստով, որ համարձակ մարդիկ, ինչ-որ արտաքին մղման ազդեցության ներքո, հանկարծ վերածվեցին սրիկաների: Ընդհակառակը, մենք գիտենք, որ մեր էությունը կամ մեր բնավորությունը սովորություն ունի կայուն մնալ ամբողջ կյանքի ընթացքում: Մենք նորից ու նորից նույն սխալներն ենք գործում, և մեր լավ կողմերը կրկին ի հայտ են գալիս:

Այս տեսակետը բխում է այն կարծիքից, որ վատ սկիզբը դրսևորվել է մի խումբ մարդկանց մեջ, դրանով իսկ հակադրվելով հսկայական ամբողջությանը: Այսպիսի կարծիքն անհիմն է. մենք ավելի շուտ պետք է հասկանանք, որ բոլորս այս կամ այն կերպ մասնակցել ենք այսպես կոչված հեղափոխությանը կամ անձնապես մեղավոր ենք դրա համար՝ ինչպես նրանք, ովքեր ակտիվորեն իրագործել են այն, այնպես էլ ուրիշները, ովքեր «արել են» պասիվ աջակցություն ցուցաբերելով: Դրանց թվին է դասվում ազգի գրեթե յուրաքանչյուր մարդ, ով վերապրել է այդ օրերը: Բացառություն են կազմում քչերը՝ դրանք են ռազմանավի սպաները, ովքեր դրոշը ծածկել են իրենց մարմինով, որոնց սխրանքը միշտ կառաջացնի մեր բարձրագույն հարգանքը: Բայց շատ չէին նրանք, ում մեջ պահպանվում էր նման կենդանի ոգին, և հենց ընտրյալները չէին պատկանում նրանց: Հեղափոխական էին զանգվածները, որոնք փողոցներով կարմիր դրոշներ էին ծածանում, բայց հեղափոխական էին նաև իշխանավորները, որոնք չէին հրամայում կրակել դրանց վրա, և դեռ մեծ հարց է, թե ում գործողություններն ավելի շուտ հասցրին այդ արդյունքին:

Մի ողջ պատմական դարաշրջանի տապալումը, որն ավարտվեց արդեն նյութական ճակատամարտի տեսքով, այստեղ արտահատվեց պետական ձևի լեզվով: Հին ռայխի գաղափարի ուժը մարեց ոչ միայն այն քչերի սրտում, ովքեր կարմիր դրոշի տակ երևակայկում էին, թե հեղափոխություն են անում՝ այն մարեց ընդհանրապես մեծամասնության համար: Կարելի էր գցել ամենաշքեղ սեղանները, կարելի էր ամեն կերպ թուլացնել կամ խստացնել կարգապահությունը, սակայն ոչինչ չէր օգնի, երբ ժամացույցը կանգ առներ: Մենք կարող էինք հաղթել պատերազմում, բայց հեղաշրջումը կարող էր հաջորդել այլ, անտեսանելի ուղիներով: Այն անխուսափելի

էր և մենք դա տեսնում ենք նրանից, ինչ տեղի է ունեցել կամ դեռ տեղի է ունենալու հաղթող պետություններում։

Դրանով է բացատրվում այն փաստը, որ մեծ քաղաքները, որոնց թշնամին չէր կարող հասնել չորս տարի, ընկան ապստամբների հաճախ ծիծաղելի փոքր խմբերի ձեռքը՝ առանց մի կաթիլ արյուն թափելու։ Այն, ինչին չէր կարող հասնել ամբողջ աշխարհը, մինչ ոգին դեռ ուժեղ էր, իրագործեցին մի քանի հարյուր հոգի, երբ այդ ոգին այլևս չկար։

Երբ հին ռայխի ներքին ուժի ռեսուրսը սպառվեց, բավական էր փչել, որպեսզի այն փլուզվեր ինչպես խաղաթղթերից կազմած տնակը։ Չէր օգնի նաև այն պատճառաբանությունը, որ եթե մենք դիմանայինք ևս վեց ամիս, մյուսները կփլուզվեին մեզանից շուտ։ Պատմությունը կայացրեց իր անվիճելի դատավճիռը, որից առաջ նման հաշվարկները ընկալվում էին որպես մանկական մի բան, երբ բացահայտվում էր անտեսանելին։ Եթե մենք ավելի երկար դիմանայինք, ուրեմն ավելի մեծ կլիներ մեր ներքին ուժը, իսկ այդ դեպքում մենք, հնարավոր է, Մառնայում հաղթեինք պատերազմը։

Մենք պարտավոր ենք, չնայած այդպիսի ըմբռնումը դժվար է, բավարարվենք այն մտքով, որ մենք դեռ չենք հասունացել կայսրական մեծ ուժին տիրանալուն։ Դրա գաղափարը մեր մեջ առկա էր, մեծ նախաձեռնություններ են ձեռնարկվել, ակնառու նվաճումներ են կատարվել։ Այդ ձեռքբերումները տեղի են ունեցել ոչ իզուր, ոչ ապարդյուն՝ իզուր ձեռքբերումներ չեն լինում, դրանք այսօր էլ գործուն են բոլոր առումներով։ Բայց նրանք կարող էին հասնել միայն այն մակարդակին, որը համապատասխանում է իրենց ներքին ուժին։

Այսպիսով, մենք կռահում ենք, որ գաղափարի ուժային դաշտը անցնում է մեր կողքով և արտահայտվում է արտաքին դրսևորման մեջ։ Քանի դեռ գաղափարը մոտ է և հզոր, այն ներգրավում է անհատին և զանգվածներին չլսված արարքների մեջ՝ դուրս գալով իր սահմաններից և հաղորդելով այնպիսի խորհրդանիշներ, ինչպիսիք են փառքը, պատիվը, հայրենիքը, բեղմնավոր կենսունակությունը։ Բայց երբ այն մարում է, ամեն ինչ ընկղմվում է խավարի մեջ։ Այդ ժամանակ աննշան ու փոքր են դառնում մարդիկ, որոնց մեջ կարծես, հենց նոր էր մարմնավորվել ճակատագիրը, և պատվի, պարտքի, զոհաբերության փոխարեն հռչակվում է խաղաղություն, ազատություն, հաց։

Իրական խիզախության համար կասկած չկա թե որ վիճակում է մարդու դիրքն ավելի տպավորիչ և բարոյական։ Միայն այն ժամանակ, երբ մարդն ինքը կանգնած է մեծագույն առաջադրանքի հետևում, միայն այն ժամանակ, երբ նրա միջոցով է խոսում բարձրագույն կամքը, նա զորավոր կերպով վեր է բարձրանում անձնականից, և միայն այդ ժամանակ է նրա գործողություններում ճանաչվում խորագույն իմաստը։ Այսպիսով, մեզ համար էական է, թե ինչ արեց նավի անձնակազմը, երբ գաղափարը ողջ ուժով կենդանի էր դրանում։ Այն ժամանակ ամեն բոպեն և ամեն վայրկյանը

որոշիչ արժեք ուներ։ Էական չէ այն, ինչ նա արեց, մտածեց և զգաց հետո, երբ ճակատագրի մեծ համայնքը պետք է կազմալուծվեր, քանի որ գաղափարն այլևս չէր միավորում նրան։ Այդ նույն մարդիկ մեզ համար նշանակալի են, քանի դեռ նրանք մեծագույնի արտահայտությունն են, և նրանք ոչ մի հետաքրքրություն չեն ներկայացնում, երբ իրենք իրենցից բացի այլ բան չեն։

Յուրաքանչյուրը վերապրում է պատմական դարաշրջանի փլուզում։ Մեկը դա ցավագին է ընկալում որպես անհասկանալի ներխուժում, մյուսը՝ արձագանքում է դրան։ Իրականում այն դարձել է պատմություն, և մենք կարող ենք միայն հուսալ, որ նոր մեծագույն կայսրության ծիլերն արդեն ճեղքելով բարձրանում են վեր, քանի որ մենք արդեն զգացել ենք, թե ինչ է մարդն առանց գաղափարի։ Հավատքի և զգացողության բացակայության մասին մեր ժամանակի հսկայական թախիծը բացահայտում է այս դատարկությունը։ Բարձրագույնը մեր կորցրած ձևերը չեն, այլ ներքին ուժն է, և դրա վերադարձին պետք է ուղղված լինի մեր հույսը։ Հեղափոխություն կոչվածը կարող էր ոչնչացնել միայն ձևը՝ ոգին չէր կարող ոչնչացնել, որովհետև իր էությամբ հեղափոխություն չէր, այլ ընդամենը կործանման արտաքին նշան։

Մեր համար կարևորագույնը ոչ թե պետական ձևի հեղափոխությունն է, այլ հոգու հեղափոխությունը, որը քաոսից ստեղծում է նոր, երկրածին ձևեր։ Բացի այդ, պատերազմի վերապրումը մեզ համար նշանակում է պտղաբեր հող, որից ոչ թե ժխտողականություն է աճելու, այլ նոր, ավելի հզոր կյանք։

Հեղափոխության մեջ անձնականի մասին դեռ կխոսենք։